ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 11, 24.06.2019թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց բաժնետիրական ընկերության անվանական, արժեկտրոնային պարտատոմսերն ապացուցակելու և ավտուրը պարտատոմսերի երկրորդային(Bbond) ցուցակում դադարեցնելու մասին «Հայաստանի ֆոնդային բորսա» Բաց բաժնետիրական ընկերության Գլխավոր տնօրենի 2019 թվականի հունիսի 17-ի թիվ ՑՊ-025-06/19 որոշում («Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ Գլխավոր տնօրենի որոշումը կցվում է):

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի 2019 թվականի N ՑՊ-025-06/19
ք. Երևան

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՆ ԱՊԱՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆոնդային բորսա» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 21-րդ գլխի 107 կետի 5) ենթակետը, ինչպես նաև «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Թողարկող) 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 7% արժեկտրոնային տոկոսադրույքով, 40,000 հատ անվանական պարտատոմսերի (ARBKB2B) շրջանառության ժամկետը լրանալու հանգամանքը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 107 կետի 5) ենթակետի և Օպերատորի Կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 7% արժեկտրոնային տոկոսադրույքով, 40,000 հատ անվանական պարտատոմսերը, որոնց շնորհվել է AMARBKB2BER6 ծածկագիրը և ARBKB2B հապավումը, ապացուցակել և դադարեցնել առևտուրը պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, ինչպես նաև դադարեցնել դրանցով հասցեական և ռեպո գործաքներ կնքելու թույլտվությունը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով՝ համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ս.թ. հունիսի 18-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**